

Արդ այս աստուածատուր օրհնութեան հետ, զիսցի՛ր ո՛վ հոգեւոր սիրելի գաւակս, որ, երբ մեզմէ բաժնուեցար, մենք վրաստան գացինք. եւ երբ հոն էինք, Երեւանի Խանը կամ Փոխարքան մեզի զրկեց ազա մր. որպէսզի Երեւան վերադառնայինք, սակայն չուզեցինք իր քով վերադառնալ: Շարունակելով մեր ֆամբան, հասանք մինչեւ Բակաչուխ (Bagaciuch), եւ այն տեղէն մտանք Գադիան (Dadian), որպէսզի Սեւ Ծովու վերայով Խրիմ հասնէինք: Սակայն մեզի անկարելի եղաւ անցնիլ, որովհետեւ Գանձակի մէջ (Kamsa) մեծագոր թուրք մը բմբոստացած էր: Ջայն նուանելու համար երկու բաշաներ որոշուած էին, այսինքն Ագամբաշան (Asambascia) մէկ կողմէ. եւ Տրապիզոնի բաշան միւս կողմէ, որոնք այդ երկիրը ա՛յնպէս շրջապատած էին ծովէն, որ նոյնիսկ թրոչունները չէին ուզեր անցնիլ: Այս պատհանաւ նաեւ մենք ստիպուեցանք վերադառնալ դէպի Ախլցխա (Achelecha), որպէսզի Տրապիզոնի ֆամբով անցնինք Եւրոպա: Այն տե՛ն կարնոյ Բաշան լսելով մեր մասին, զինուորներ զրկեց մեր դէմ, որոնք մեզ ձեռքակալեցին Սպերի մէջ, եւ առաջնորդեցին դէպի կարին. եւ հոն զիս միջնաբերդին մէջ պահեցին, ըսելով՝ թէ կ'ուզեմ Փրանկներու երկիրն երթալ: Բաշան ըսաւ. «Միջնաբերդին մէջ կեցիր, մինչեւ որ քու մասիդ Սուլթանին գրեմ. եւ պիտի տեսնեմ ի՛նչ պիտի հրամայէ, այնպէս պիտի ընեմ»: Ուստի բանտարկուած մնացի ամիս մը այդ միջնա-